Հրանտ Մաթևոսյան

Մեր վագքը

Դասարանում կար Սամադ, կար Մադաթ, կար Ամրխան, բայց Թուրք մենք Արտավազդին էինք ասում: Չգիտեի ինչու էինք Թուրք ասում, բայց Թուրք էինք ասում: Հիմա գիտեմ: Նրա եղբայրները դառնալիս էին եղել մեկ տարեկան ու մեռնելիս: Նրանից առաջ ծնված նրա եղբայրները դառնալիս Էին եղել մեկ տարեկան ու մեռնելիս, և պառավները նրա մորը խորհուրդ Էին տվել երեխաների վրա թուրքի ու քրդի մի օտար անուն դնել: Մահը չէր հասկանա, իբր, որ օտարի անվան տակ հայի տղա է ու ետ կդառնար ձեռքերը պարապ: Այդպես: Նրա հայրն ու մայրը լսել էին պառավների խորհուրդը, երեխայի վրա դրել էին թուրքի թե քրդի Արտավազդ օտար անունը և սպասել: Անցորդը, նրանց ցանկապատին հենված, նրա մորից մի բաժակ ջուր էր խնդրել և երկար կյանք Էր մաղթել նրա գրկի տղային: Մայրը տխուր ժպտացել ու ասել էր, որ օտար անուն են դրել, որպեսզի... և անցորդը պայծառ ժպտացել ու ասել էր, որ դա օտար անուն չէ, իսկական հայի անուն է: Նրա մայրը սարսափից քարացել էր, նրա հայրը հուսահատ ժպտացել ու նստել էր խնձորենու տակ: Այդպես: Անունը հայի անուն էր, երեխան, սակայն, չէր մեռել, ապրում էր, դասարանը նրան Թուրք էր ասում: Հետո դպրոցի վարիչը ներս մտավ, դասարանը ոտքի կանգնեցրեց, ծանր, լուրջ, պինդ՝ ինքը դասարանի դեմ լուռ կանգնեց այնքան, որ մեր հարգանքը վախի պես մի բան դարձավ, և բանակային հրամանի նման հայտնեց, որ յուրաքանչյուրս ունենք մեր անունը, և մյուս անգամ ինքը այդ դպրոցում մականուն չլսի: Դանդաղ՝ մենք գլուխներս Թուրքին դարձրինք, և այդ ժամանակ վարիչը շշնջաց. «Զգա՛ստ: Ինքներդ ձեզ նայեք»: Նրա շշունջը լսելու համար մենք շունչներս պահում էինք և մեր շունչը կտրվում էր: Կանաչ աչքերը լուրջ՝ դասարանի դեմ նա այդպես կանգնեց այնքան, որ բոլորիս ու

յուրաքանչյուրիս մեջ տեսավ, զինվորական հնազանդությունը, և այդ ժամանակ միայն դուրս գնաց: Եվ երբ նա դուրս գնաց, Թուրքի վրա մենք արդեն դրել էինք Օտար անունը:

Օտարի մայրը գրադարանի հավաքարարն էր. ավլում էր, ջուր էր բերում, փոշին սրբում ու գիրքը գրքերի արանքն էր մտցնում գլխիվայր, որովհետև անգրագետ էր: Նա գրադարանի հին պաստառը, որին կավճաշաղախով դաջված էր եղել ԿՈՐՉԵՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԶԱՎԹԻՉՆԵՐԸ, վառ կարմիր այդ պաստառն ահա գրադարանից տարել էր տուն, լվացել էր և որդու համար վերնաշապիկ էր կարել:

Օտարի հոր սիրտը հիվանդ էր. նվում էր ու չէր մեռնում, նվում-նվում էր ու չէր մեռնում: Նվնվում էր ու ռազմաճակատ չէր գնում, իրենց տանը իր որդու կողքին էր, մեր կողքին չէր, իր որդու կողքին էր: Նա գյուղի միակ տղամարդն էր... նա ամաչում էր այն բանի համար, որ ինքը գյուղի միակ տղամարդն է: Նա մեր մայրերի ձեռքից կացինը վերցնում էր, որպեսզի ինքն աներ փայտ ջարդելու տղամարդու այդ գործը, մի երկու անգամ խփում էր գերանին և կնճռոտվում ու բռնում էր սիրտը: Նվում էր ու չէր մեռնում, նվնվում ու չէր մեռնում: Նվալով կար, հայր էր, իր Օտար որդու հայրն էր, իր որդուն էր օգնում՝ լուծելու մաթեմատիկայի խնդիրները, իսկ մեր հայրերը ռազմաճակատում էին: Վաղ լուսաբացի սառնամանիքը ճաքճքեցրել էր իմ ձեռքերը. ես մի կերպ կարողանում էի խոտ տալ կովերին, մի կերպ բռնում էի թիու կոթը և մաքրում գոմը, բայց չէի կարողանում գրիչ բռնել գրիչի տակ մատներիս մեջ սուր ծակոցով փշեր էին արթնանում: Մեր բոլորիս ձեռքերն էին ճաքճքած, ես ինչո՞ւ եմ ասում «իմ ձեռքերը», «իմ մատները», որովհետև ես հիշում եմ իմ ցավը: Իմ մարմինը հիշում է միայն իր ցավը:

Երբ Օտարը դասարան մտավ կարմիր վերնաշապիկը հագին, մենք բոլորս կարծեցինք աղջիկ ներս մտավ: Հետո տեսանք, որ Օտարն է, կարմիր վերնաշապիկ է հագել, և տեսանք, որ բոլոր տղաներս դարչնագույն ենք, տնագործ բրդե մեր շորերը միայն դարչնագույն են: Մենք սառած գետակն ի վար իջնում էինք, գնում մինչև Սղոցարաններ ու շալակով կաղնու կեղև էինք բերում, որպեսզի մեր մայրերը կաղնու կեղևով դարչնագունեն բուրդը, իսկ Օտարն, ահա, կարմիր վերնաշապիկ էր հագել: Մի րոպե մենք լռեցինք ու լուռ մտածեցինք, որ Օտարի հայրը նվվում է ու չի մեռնում, Օտարի մայրը գողացել է գրադարանի կարմիր պաստառը և կարմիր վերնաշապիկ կարել: Ես թուքս կուլ

տվի ու չասացի, որ նրա մայրն, ուրեմն, գողացել է կարմիր...
Աղջկա շոր ես հագել, ասացին:
Օտարը խոնարհեց աղջկա իր երկար թարթիչներն ու թուքը կուլ տվեց, ես տեսա ադամախնձորի դանդաղ վերուվարումը նրա բարակ վզին: Ես գնացի նստեցի իմ տեղը, որպեսզի նրանցից հեռու լինեմ և նրա մասին, որևէ սրամտություն չանեմ: Բայց ես չէի կարողանում չնայել նրա կարմիր վերնաշապկին:
Դու դրոշակ ես, ասացին:
Դու հերոսության դրոշակ ես, ասացին: Ապա ես լսեցի Մադաթի շատ չոր ձայնը. Դու քո հոր հերոսության դրոշակն ես:
Հայացքը խոնարհած՝ Օտարը կանգնել էր ու նրանցից չէր հեռանում:
Պատմության ուսուցչուհին եկավ, ամեն մեկն անցավ իր տեղը, իսկ Օտարը, իր կարմիր վերնաշապկով, դասարանի դեմ կանգնած էր հայացքը կախ:
Ինչո՞ւ չես անցնում տեղդ, ասաց պատմության ուսուցչուհին:
Կարմիր վերնաշապիկ է հագել, ասացին:
Այո, ասաց պատմության ուսուցչուհին: Դանդաղ, ասես կավացեխի միջով, մեր հայացքների տակ նա եկավ նստեց իմ առջև, իր տեղը:
Կարմիր վերնաշապիկ է հագել, ասացին բնագիտության ուսուցչուհուն:
Այո, ասաց բնագիտության ուսուցչուհին, կարմիր վերնաշապիկ է հագել, հետո՞ ինչ:
Հոր հերոսության դրոշն է, ասացին:
Ոչ, ասաց բնագիտության ուսուցչուհին, ձեր նախանձի դրոշն է:
Նրա մայրն ինչքան էլ լվացել էր՝ կավճաշաղախը կարմրի վրայից չէր անցել, լավ չէր անցել, օճառ չկար, միայն տաք ջրով... Ես այս պատմությունն իզուր սկսեցի. չգիտես, թե ինչպես կարող է պատահել, որ օճառ չլինի, որ լվացքը մոխրաջրով անեն, որ քեզ մոխրաջրով լողացնեն, չգիտես, թե քոսն ինչ է, թե մենք ինչու էինք կաղնու կեղևը Սողցարաններից շալակած բերելու գյուղ, թե ոջիլն ինչ է, թե մեզ ինչու չէին թողնում մազ պահել. չգիտես, թե ինչ է քո մերկ մարմնին կպած կոշտ բրդի անընդհատ գոյությունը և որ մենք չէինք կարող հանել շպրտել բրդե այդ ծակծկող, անընդհատ քորեցնող ու ծակծկող կոպիտ գործվածքը (մեր մայրերն ասում էին՝ «գործքը», «գործը»). դու չգիտես, թե ինչ է պատերազմը և ինչ լավ է, որ չգիտես:
Օտարը, ուրեմն, իմ առջևն էր նստում: Նրա կարմիր թիկունքը հիմա, ուզեի թե չուզեի, իմ հայացքի մեջ էր: Նրա մայրն ինչքան էլ լվացել էր՝ սոսնձի ու կավճի

շաղախը պաստառի միջից չէր անցել: Մի քիչ սրվելով՝ ես տեսա հին տառի լրիվ հետքը՝ Տ: Անմիջապես Տ-ի կողքին 0 տառն էր: Ես դա զրո էի տեսնում, բայց զրոյի կողքինը թվանշան չէր, այլ՝ Ա: Եղավ ՏԱՕ... Ես սկսեցի ուրիշ տառ փնտրել: Զախ թևքի վրա Զ էր: Եղավ ԱԶՕՏ: Որ ի՞նչ: Բոլորովին էլ սրամիտ չէր, բայց ես ժպտում էի, որովհետև համարյա թե սրամիտ էր: Նրա նիհար ուսին կես Ն էր: Թիկունքով նա իմ հայացքը երևի զգում էր, որովհետև կուչ էր գալիս ու կուչ էր գալիս: Ես ամաչեցի ու ինձ ասացի, որ նրա թիկունքին, նրա կուչ եկած թիկունքին, նրա նիհար ուսերին, նրա բարակ վզին ու ծոծրակի փոսին չեմ նայելու, բայց նա քարացել ու աչքիս դեմ էր արել հենց Ա տառի կողքին՝ Ր: ՕՏԱՐ:

«Օտար» մտքիս մեջ ասացի ես: «Օտար» ասացի ես շշունջով, որաեսզի միաժամանակ ասած լինեմ ու ասած չլինեմ:

Կարմիր վերնաշապիկ է հագել, ասացին աշխարհագրության ուսուցչուհուն: Պատերազմը վերջանա՝ բոլորդ էլ կհագնեք, ասաց ուսուցչուհին:

«Օտարի մեջքին գրված է ՕՏԱՐ», ասացի ես մտքիս մեջ, որպեսզի բարձրաձայն չասեմ:

Դասամիջոցին ես ու Մադաթը կռվեցինք: Դա, իհարկե, կռիվ չէր, բայց ինչպես չէր կռիվ, եթե Մադաթը նստել էր իմ կրծքին և կեղտոտ ձնագունդը խցկում էր իմ բերանը: Բերանս սեղմած՝ ես գլուխս փախցնում էի, իսկ նա կատաղում և դարձյալ ու դարձյալ ուզում էր կեղտոտ ձնագունդը խցկել իմ բերանը: Եթե ես թիկունքի էի ընկած, և ինքը պինդ նստած էր իմ կրծքին՝ նրա համար դա հաղթանակ չէր, իր կեղտոտ ձնագունդը նա սեղմում ու սեղմում էր իմ բերանին և կատաղում էր այն բանի համար, որ իմ բերանը չէր բացվում, դեռ չէր բացվում: Իսկ հետո արդեն եկան վարիչն ու ռազմագիտության ուսուցչուհին:

Մենք շարվեցինք, ձախ դարձանք և, նրա պողպատե հայացքի տակ, սպասեցինք: Մի րոպե մենք այդպես սպասում էինք, և մեր դեմքերից դանդաղ սրբվում էր դասամիջոցի աշխուժությունը, մեր մեջ մեռնում էին դասամիջոցի կատակները: Այդաես սրբվեց, այդպես մեռան, և տակը մնաց գունատ երեխաների մեր շատ լուրջ ու մի քիչ վախվորած շարքը: Նրա եղբայրը զոհվել էր ռազմաճակատում, և նրա առջև, զոհված եղբոր համար, մենք բոլորս մեզ մեղավոր էինք զգում, թեկուզ մեղավորը մենք չէինք, և հարգանքի հետ նաև վախենում էինք նրանից, որովհետև երբ նա մեզ նայում էր, ամեն անգամ երբ

նայում էր, մեզ թվում էր, թե մենք ենք սպանել նրա եղբորը: Շաբաթից շաբաթ և դասից դաս, նույնիսկ մեկ օրվա մեջ, մաթեմատիկայի ժամից մինչև ռազմագիտության ժամ, խստությունը նրա դեմքին կարծրանում էր, և մենք հասկանում էինք, թե նրա համար ինչքան լավն էր եղել նրա եղբայրը, ինչքան խորն էր եղել եղբոր սերը նրա մեջ, և ինչքան մեծ է նրա վիշտը:
Ես թուքս կուլ տվի ու մտածեցի, որ լավ կլիներ, եթե իմ անգրագետ մոր փոխարեն իմ մայրը նա լիներ, այդ դեպքում նրա մաթեմատիկայից ես չէի վախենա, իսկ նրա ռազմագիտությունից ես չէի վախենում:
Ի՞նչ է, շշնջաց նա:
Ես ընդամենը թուքս կուլ էի տվել ու մտածել, որ լավ կլիներ... «Ոչինչ», չասելու պես ցածր ասացի ես, կանգնեցի զգաստ ու զոջացի մտածածիս համար:
Աղջիկները շարքից դուրս եկան. նշանակում է՝ նա շշնջացել կամ միայն նայել էր, և աղջիկները հասկացել էին, որ իրենց հրամայված է շարքից դուրս գալ: Ձմռան ու գարնան այդ կեղտոտ արանքում գյուղի ամբողջ կարմիրը, նարնջին, կանաչը նրանց հագին էր, նրանք անաղմուկ խմբվեցին ու մեր դարչնագույն շարքին նայեցին մի քիչ հեգնանքով, մի քիչ էլ սիրով: Մինչև հիմա ես հիշում եմ նրանց խաժ աչքերի բույլը: Բույլը՝ այսինքն խումբը, այսինքն երբ աղջիկները խմբված են ու բոլորը միասին քեզ են նայում: Կարելի է ասել աստղաբույլ, կարելի է ասել երիցուկի բույլ, աստղածաղկի բույլ, կարելի է ասել, երբ նրանց հայացքը մաքուր է, և նրանք քեզ նայում են մի քիչ հեգնանքով ու մի քիչ էլ սիրով, աղջիկների խաժ աչքերի բույլ:
Նա ունքերը հավաքեց, և տղաների մեր շարքը խտացավ:
Նա դանդաղ բարձրացրեց դեմքը և շարքի մի ծայրից բոլորիս ու յուրաքանչյուրիս վրայով մյուս ծայրը տարավ իր կանաչ աչքերի լուրջ հայացքը:
Շարքը հասկացավ, որ... Շարքը մի վայրկյան, ինքը իրեն համրելուց առաջ, քարացավ, ապա ես լսեցի շատ չոր՝ քարով քարի խփելու պես.
Մե՛կ:
Երկո՛ւ, իմ թիվն ինձնից ձախին նետեցի ես: Մի կիսահայացքով ես նկատեցի մեր շարքի ամբողջ դարչնագունությունը և շարքի ամենածայրում՝ մի կենտ կարմիր վերնաշապիկ:
Ո՛ւթ:
Ի՛նը:
Տա՛սը:

Տասնմե՛կ:
Տասներկո՛ւ:
Վե՞րջ: Ոչ:
Տասնե... եկավ Օտարի անհամարձակ, ձայնը: Աղջիկների աչքերում ժպիտի պես մի բան երևաց, իսկ ուսուցչուհին դարձյալ տարավ իր կանաչ աչքերի խիստ հայացքը շարքի մի ծայրից մյուս ծայրը: Խոր լռություն էր, մենք շունչներս պահել էինք, այդ լռության մեջ կայծկլտում էին աղջիկների աչքերը: Ես լսում էի իմ սրտի զարկերը և նույնիսկ լսում էի, թե իր մտքի մեջ ինչ է մտածում № 1-ը № 13-ի մասին: Ինձ թվում էր, թե իմ սրտի զարկերը № 1-ի սրտի զարկերն են և № 13-ի մասին նրա մտածածը ես եմ մտածում:
Ուռաա՛... ծնվեց, հեռու Սուր բլրին հաստատվեց ու Մեծ հովտով մեկ ձյուների վրայով ծավալվեց մինչև գյուղ ութերորդ դասարանցիների կանչը, ասա-ա՛ աա...
Նրանք զորավարժության էին անում: Նրանց հրացանները մեր հեռվից իսկական էին երևում, նրանց ձայների պատանեկան հնչումը խլանում էր խմբային աղաղակի մեջ, և դա թվում էր իսկական գրոհ Սուր բլրի լանջերն ի վար Մեծ հովտով դեպի Ձնծաղկի բլուր: Նրանց սև կետերը հիմա չէին երևում, միայն բլրի սպիտակ լանջն էր, իսկ նրանց աղաղակը լսվում էր. ուրեմն՝ նրանք հովտում էին, գրոհում էին Ձնծաղկի բլուրը: Այնինչ, Ձնծաղկի բլուրը լռում էր: Իմ աչքերը լարվելուց արցունքոտվեցին, բայց Ձնծաղկի բլուրը միայն մաքուր սպիտակ էր, ոչինչ այնտեղ չէր շարժվում ու լուռ էր: Մենք բոլորս նայում էինք Ձնծաղկի բլուրին, «թշնամին մի՞թե սպիտակ շոր է հագել», մտածում ու լարված նայում էինք մենք, թշնամին, այնինչ, հայտնվել էր նրանց թիկունքում, նույն Սուր բլրի լանջին էր, լուռ ու արագ իջնում էր, նրանց ետևից արդեն հովիտ էր մտնում: Ութերորդ դասարանցիները դեռ միայն «ուռա» էին գոռում, իրենց հերոսական աղաղակը լցրել էին իրենց ականջները և չգիտեին, որ դա տխուր ու հիմար «ուռա» է:
Ութերորդ դասարանցիների այդ միամտության պատճառով ուսուցչուհու դեմքին զզվանք խաղաց: Եվ, ասես դատարկ բլուրը գրոհող միամիտները մենք էինք, զզվանքով նա մեզ հրամայեց.
Զգա՛ստ: Հապա մի մեկից վերջ թիվ տուր:
Իմ ականջի մոտ հնչեց քարով քարի խփելու լսես.
Մե՛կ:

Երկո՛ւ, իմ թիվն ինձնից ձախին նետեցի ես:
Երեք:
Նա հիմա մեզ կբաժանի երկու խմբի, կենտ թվակիրները՝ առաջին խումբ, զույգերս՝ երկրորդ: Օտարը տեսնես կե՞նտ է, թե զույգ: Երանի կենտ լինի:
«Տասներեք» թիվը կերկերաց Օտարի անհամարձակ ձայնի մեջ:
Տասնչորս:
Բայց նրանք՝ և պարտված ութերորդցինե՛րը, և հաղթած յոթերորդցիները, որոնց ձայները ձյունածածկ Մեծ հովտում այդ պահին բռնկվեցին շատ ուժեղ, բոլորը նրա աշակերտներն էին, և այդ № 1 Մադաթը նրա զոհված եղբոր որդին էր, և Օտարի ձայնը վախեցած էր, և աղաղակը հովտում հանգավ, և տնագործ նեղ տաբատներով մենք եվրոպացի ասպետների նման էինք, իսկ հովտի տղաները երևի հոգնած թափվել ու ձյուն էին ուտում, ահա, այս բոլորի կամ այս բոլորից միայն մի բանի համար (կամ գուցե Օտարի վրա նա տեսել էր Տ տառը) ուսուցչուհին մի քիչ, հազիվ նկատելի Ժպտաց, և ես դարձյալ մտածեցի, որ լավ կլիներ, եթե իմ մայրը նա լիներ: Այդպես էր. մեզ համար նրա մի ժպիտն ավելին էր, քան մեզ մեր մայրերի լողացնելը, այդ ձմռան մեջ տաք ջրով մեզ լողացնելը:
Երկու շարք կա՛զ-մի՛ր: Մե՛կ, երկո՛ւ, երե՛ք:
Տրեխավոր ոտքերի փափուկ քայլերով զույգ թվակիրներիս երկու քայլ առաջ ու մի քայլ կողքի գնացինք: Ես տեսա, որ թեկուզ փոքրիկ, թեկուզ յոթհոգիանոց շարքի գլուխ կանգնելն ինձ դուր է գալիս:
Առաջին շարք, գետն ի վեր մինչև Տաք աղբյուր՝ վազքո՛վ: Այնտեղ ծաղկած ուռենի կա, յուրաքանչյուրը բերում է ծաղկած ուռենուց մի փոքրիկ ճյուղ: Կրկնե՛լ:
Իմ սիրտը թպրտաց. դա և վազքի ցանկությունի՛ց էր, և նրանի՛ց, որ խաժ աչքերի բույլը կար մեր կողքին, և ա՛յն բանից, որ արդեն գալիս էր, ուրեմն, դեղնականաչ փափուկ գարունը:
Չեմ ուզում, Օտարին իմ խմբից հանեք, չոր, քարով քարի խփելու պես ասաց Մադաթը:
Նա դեմքը դանդաղ բարձրացրեց և շշնջաց շատ ավելի աչքերով, քան բերանով.
Ի՞նչ օտար:
Մենք բոլորս կիսաշրջվեցինք ու նայեցինք Օտարին. նա զգաստ էր կանգնել, բայց ինձ թվաց, թե դարձյալ կծկված է իր Օտար անվան, իր հոր նվոցի, մոր միամիտ գողության տակ: Ադամախնձորը, նրա բարակ վզին, դանդաղ բարձրացավ, մնաց ու դանդաղ իջավ: Մենք բոլորս նայում էինք նրան,

ուսուցչուհին նայում էր նրան և սպասում էր, թե ինչ կասի իր եղբոր որդին:
Արտոն, մրթմրթաց Մադաթը:
Ի՞նչ Արտո: Ուսուցչուհին նրանից սպասում էր այդ անվան լրիվ ու բարձրաձայն հնչումը, և ճիշտ տեղն էր ասելու. «Եթե նրա անունը Օտար չլիներ՝ վրան գրված չէր լինի»: Դա կլիներ ամբողջ դպրոցում ամբողջ տարվա ամենասուր կատակը, բայց Օտարն այդ պահին, երբ ես խմբի ղեկավար էի, և աղջիկները նայում էին, և արդեն-արդեն դեղնականաչ գարուն էր լինելու, ինձ այդ պահին Օտարը դուր էր գալիս, նրա կարմիր վերնաշապկի մասին ես բան չասացի:
Արտավազդը, մրթմրթաց Մադաթը. նա, միևնույն է, համաձայն չէր Օտարի այդ նոր անվան հետ: Արտավազդը, չոր, քարով քարի խփելու տես ասաց նա. թող Արտավազդ լինի, բայց միևնույն է, իմ խմբից հանիր:
Ուսուցչուհին իր պողպատե հայացքը հառեց նրան, ուղղակի՝ դրեց իր ծանր հայացքը նրա վրա և ոչինչ չասաց, բայց շատ լավ հասկանալի էր, թե այդպիսով ինչ էր ասում նրան, ասում էր, որ ինքն այստեղ նրա հորաքույրը չէ, ինքը մաթեմատիկայի և ռազմագիտության ուսուցչուհին է:
Մադաթը շփոթվեց, բայց նայում էր դարձյալ ուսուցչուհու երեսին, այնուամենայնիվ, նա իր հորաքույրն էր, և, բացի այդ էլ, Մադաթը համարձակ տղա էր:
Հանեցեք, ինքն իրեն ուղղեց Մադաթը: Բայց միևնույն է՝ հանեցեք իմ խմբից:
Ներեցեք, հեգնեց ուսուցչուհին, իսկ քեզ ո՞վ ասաց, որ խմբի ղեկավարը դու ես:
Մադաթը նայեց խմբին, նայեց իրեն, խումբը նայեց նրան, և դա այդպես էր՝ խմբի հրամանատարը ինքն էր: Նա նայեց ուսուցչուհուն, համառորեն նայեց ուսուցչուհուն և չասաց «ես ասացի», բայց նաև չասաց «ներողություն»:
Ուսուցչուհին նայում էր նրան, նա նայում էր ուսուցչուհուն, և ոչ մի աքցանով նրա բերանից չէր հանվի ներողություն բառը: Եվ ուսուցչուհին տեսավ, որ դա այդպես է՝ հրամանատարը նա է ու Օտարին իր խումբ չի առնում:
Ուսուցչուհին դանդաղ իջեցրեց իր ծանր կոպերը, մի քիչ մնաց այդպես աչքերը փակ ու դեմքը բարձր, և երբ ծանր կոպերը դանդաղ բարձրացրեց՝ արտասուքով լիքը հորաքույր էր, և շատ լավ ետևում էր, որ զոհված իր եղբորը նա տեսնում է նրա որդու մեջ: Մենք դա լավ էինք հասկանում, քանի որ այդ պահին այդ տղայի մեջ մենք ինքներս տեսնում էինք հրամանատարի ու հերոսի: Նա լավ հրամանատար էր. նա ուզում էր ունենալ այնպիսի ջոկատ, որի յուրաքանչյուր մարտիկը լիներ վստահելի վազորդ: Նա լավ ուսուցչուհի էր. նա ուզում էր իր մեջ

միատեղել մեր բոլորիս ու յուրաքանչյուրիս սերը և ռազմական կարգապահությունը: Բայց այդ ինչպե՞ս է պատահում, որ ես լավն եմ, նա լավն է, դու լավն ես, բոլորս լավն ենք, իսկ վատ բան այդուհանդերձ լինում է:
Գլուխը մի քիչ թեքած, վիզը բարակ, խոշոր աչքերը փայլուն՝ Օտարը նայում էր դեպի հեռու լեռները և կարծես չէր շնչում: «Չի կարողանում վազել, ճանապարհին մնալու է, իմ խմբից հանեցեք», լսեցի ես: Օտարը թարթեց աչքերը: Միայն թարթեց աչքերը: «Չի կարողանում վազել, աղջիկների մոտ թող մնա», լսեցի ես: Օտարն անշարժ սպասում էր: Այդպես միայն գառն է թույլ տալիս խոսել իրեն մորթելու մասին, ջուրն է թույլ տալիս գովել իր համը կամ չհավանել իրեն, պայծառ արևածաղիկն է սպասում իր պոկվելուն կամ փրկվելուն: Վերնաշապկի կարմիր ցոլքը նրան գեղեցկացրել էր: Իր մասին այդ հրամանատարի և ուսուցչուհու խոսակցության, մեր հայացքների, այդ կարմիր ցոլքի մեջ նա լուռ սպասում էր, և ինձ թվաց, որ ուսուցչուհուց էլ, այդ հերոսական հրամանատարից էլ, աղջիկներից էլ լավը նա է, և ամենաստորը ես եմ, որ ահա թույլ եմ տվել այդպես քուռակի պես նրան մեջ առնել ու զրուցել նրա վազքի անպիտանությունից, և ես ինքս էլ համապատասխան տառեր եմ հնարում նրա թիկունքին: Նա թուքը կուլ տվեց, նրա բարակ վզի ադամախնձորը բարձրացավ, մնաց ու դանդաղ իջավ, իմ բուկը նույնպես նեղացավ, ու ես տեսա, որ նրա փոխարեն խեղդվում եմ: Խեղդվում եմ այն բանի համար, որ իմ հայրն ահա նվում-նվում է ու չի մեռնում, որ իմ մորն ահա հին պաստառ են տվել, և դա նման է զողության, որ պատահականությունը ճիշտ իմ մեջքին է դաջել իմ Օտար անունը, որ այս ուժեղ աշխարհում միայն իմ ուժն է քիչ:
Մադաթը թող գա երկրորդ ջոկատ, ես գնամ առաջին, ասացի ես:
Ուսուցչուհին չլսելու տվեց:
Մադաթը թող գա երկ...
Ուսուցչուհին կտրուկ նայեց ինձ: «Չեք ուզում՝ չեմ...», մտածեցի ես, բայց նույն պահին էլ հասկացա, որ նա ինձնից պահանջում է ռազմագիտությանն ու իրեն վայել դիմում:
Թույլ տվեք դիմել: Ես մի քայլ առաջ գնացի, կանգնեցի զգաստ և առաջարկեցի. Մադաթին թույլ տվեք գալ երկրորդ ջոկատ, ինձ՝ գնալ առաջին:
Նա շշուկով հարցրեց.
Ինչպե՞ս:
Ես կրկնեցի.

Ինձ կարգադրեք տեղափոխվել առաջին ջոկատ, Մադաթին՝ երկրորդ, և ասացի Մադաթին. Քանի որ չես ուզում Արտավազդի հետ նույն խմբում լինել՝ արի խումբներս փոխենք:
Նա սառնությամբ, մի տեսակ՝ չտեսնելով, նայեց ինձ ու հայացքը թեքեց: Ես շփոթվեցի: Ես հասկացա, նրա սառնության պատճառը և ավելի շփոթվեցի, նա՝ № 1 ինքը № 2 ինձնից էր բարձրահասակ, նրա 3-ը, 5-ը, 7-ը, 9-ը, 11-ը, 13-ը՝ իմ 4 6 8 10–12–14-ից. նրանը, այդպիսով, բարձրահասակների խումբ էր, իսկ ես նրան առաջարկել էի վերցնել ցածրահասակների իմ խումբը: Նա, ազնիվ խոսք, լավ զորավար էր: «Հաննիբալ», մտածեցի ես, «Սուվորով... Կուտուզով... Հասան խան... քո անունը եթե Հասան խան չդնեմ», այնինչ, նրա անունը հենց նրա վրա էր՝ Մադաթով, գեներալ գնդապետ Մադաթով: «Քո անունը եթե գեներալ մայոր Մադաթով չդարձավ...»
Փոփոխում չի լինելու, ասաց ուսուցչուհին: Առաջին շարք, գետն ի վեր մինչև Տաք աղբյուր ու ետ՝ վազքո՛վ:
Ոչ, չոր, քարով քարի խփելու տես ասաց նա, Օտարին հանեք իմ ջոկատից:
Ի՞նչ օտար, ծղրտաց ուսուցչուհին:
Դուք գիտե՛ք, ասաց նա:
Իսկ ո՞վ ասաց, որ ջոկատը քոնն է, ծղրտաց ուսուցչուհին:
Այդպես է, ասաց նա:
Իսկ եթե քեզ գցեմ փայտանոց ու դուռը վրադ կողպե՞մ, ծղրտաց ուսուցչուհին:
Նա մի պահ ճոճվեց, շարքից դուրս եկավ ու գնաց դեպի փայտանոց:
Ետ արի, ծղրտաց ուսուցչուհին:
Նա ետ չնայեց: «Գցեք փայտանոց ու դուռը վրաս կողպեք», լսվեց նրա ձայնը:
Նա գնում էր, հեռանում էր, արդեն իջնում էր նկուղի աստիճանները, նրա կեսն արդեն մթան մեջ էր: Այդպես հեռացել էր, այդպես զոհվելու էր գնացել նրա հայրը՝ ուսուցչուհու եղբայրը, և չէր վերադառնալու, էլ երբեք չէր դառնալու:
Ե՛տ արի, խնդրեց ուսուցչուհին: Աստիճանների վրա նա կանգ էր առել, երևում էր նրա միայն գլուխը, բայց ետ չէր դառնում: Կիշներ կամ կբարձրանար: Կիշներ: Երևում էր նրա միայն գլուխը: Նրա հորաքույրը հայացքը շրջեց, որպեսզի չտեսներ նրա իջնելը, անհետանալը:
Բոլորը քո պատճառով, լսեցի ես:
Բոլորը նախատինքով նայում էին Օտարին, հիմա, երբ բոլորը նախատինքով նայում էին իրեն, նա չէր համարձակվում մտածել, հայացքը հեռուներին ասահած,

որ ինքը մեղավոր չէ. նա կուչ էր եկել հենց մեղավորի պես և վախենում էր երևացնել բողոքի իր միակ խեղճ նշանը՝ ադամախնձորի վերուվարումը: Իսկ Մադաթը շուռ էր եկել ու բարձրանում էր նկուղի աստիճանները՝ մեկ աստիճան, երկու աստիճան, կանգ առավ, երեք աստիճան, դանդաղ բարձրանում էր դեպի գեներալություն, գեներալ-մադաթովություն: Նա ինձ սաստիկ դուր չեկավ, և հիմա, երբ բոլորը նախատինքով Օտարին էին նայում, և Օտարն ինքն էլ իրեն համարում էր մեղավոր, զուտ այն պատճառով, որ Մադաթն ինձ դուր չեկավ, ես կարողացա հասկանալ, որ մեղավորը Օտարը չէ, որ եթե ճագարը շան առջև կուչ է գալիս՝ չի նշանակում, թե ճագարը մեղավոր է:
Ոչ զոչում, ոչ բան, եկավ ազատ-անկախ կանգնեց իր տեղը, շարքի առջևում, հանգիստ ասաց.
Խնդրում եմ հանեք:
Ինչո՞ւ:
Լավ չի վազում:
Այս, ասաց ուսուցչուհին: .
«Այո», դե ուրեմն հանեք: Նա մեզ հետ չի կարող վազել, ջոկատը նրա պատճառով ետ է մնալու: Մենք չենք կարող նրա պես դանդաղ գնալ:
Դա այդպես էր և միայն այդպես էր: Բայց ես չեմ հասկանում, ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես կարելի է կանգնել մարդու դեմ և ասել, որ նա թույլ է, նրա ծնկները ծալվում են, վազքի համար նա պիտանի չէ:
Դուք չեք ուզում նրա պես դանդաղ գնալ, նա չի կարող ձեզ հետ վազել, հասկանալի է, ասաց ուսուցչուհին, բայց հանեմ ի՞նչ անեմ:
Մադաթը չպատասխանեց, իշխանաբար թեք նայեց խմբին ու արհամարհոտ հայացքը գամեց Օտարին, քիչ էր մնում նրան պարզապես շարքից դուրս գալ հրամայեր: Դա ինձ դուր չեկավ:
Դու դարձյալ քո՞նն ես պնդում, ասաց ուսուցչուհին: Ինձ դա էլ դուր չեկավ, ուսուցչուհին կարծես թե գոհ էր այն բանի համար, որ այդ Մադաթը ուներ իր կարծիքը և պինդ կանգնած էր իր կարծիքին: Ուսուցչուհին դարձավ ինձ: Իսկ դո՞ւ:
Քամին սուրում է, արծիվը ճախրում է, ջրվեժը քարափից նետվում է, ձայնը թոչում է, հորթը քամու հետ սլանում է... վազքից թեթև բա՞ն: Ես ուզում էի ասել «Արտավազդին փոխեք իմ 7-րդի հետ», ես արդեն-արդեն ասում էի, բայց տեսա, որ դա հենց Մադաթի ուզածն է: Իսկ նա չէր թաքցնում, որ իր ուզածն այդ է:

Նրա հայացքն ու կեցվածքը բաց անամոթությամբ ասում էին, որ ինքը կհաղթի ինձ, իր ջոկատը կհաղթի իմ ջոկատին, որ դասարանի ամենաթույլ վազողին նա այդպես կպարտադրի ինձ և ահա այդպես, կեղտոտ ձյունը զոռով բերան խցկելու պես, իմ բերանը կխցկի իր հաղթանակը:
Ես ի՞նչ, ասացի ես:
Արտավազդին եթե բերենք քո խո՞ւմբ:
Օրինակ, էդ ինչո՞ւ եք փոխում, փնթփնթացի ես, ոնց որ է՝ թող էնպես էլ մնա:
Նա շշնջաց.
Զգա՛ստ: Սա ձեր տունը չէ, ես էլ քո մայրը չեմ:
«Ոչ էլ հորաքույրը», մտածեցի ես, այնինչ, նա ինձնից սպասում էր ավելի լրիվ ու որոշակի պատասխան:
Թույլ է, չի կարող վազել, ասացի ես:
Դա, իհա՛րկե, ստորություն էր, բայց ես ինչպե՞ս լինեի միաժամանակ և՛ վրեժխնդիր, և՛ մաքուր:
Քիչ առաջ դու համաձայն էիր, ասաց ուսուցչուհին:
Ես նրան ինչպե՞ս բացատրեի, թե քիչ առաջ ինչու էի համաձայն և ինչու համաձայն չեմ հիմա:
Հիմա համաձայն չեմ, ասացի ես:
Ինչո՞ւ:
Այդպես է, ասացի ես և ինձ դուր չեկա: Չսիրվելը ծանր բան է, ես հայացքս փախցրի:

Ուսուցչուհու տան ու ցանկապատի մոտ ճանապարհի ոլորանը թեքվել ու հոգնած գալիս էին բոլորը՝ իբր թե հաղթած յոթերորդցիները, իբր թե պարտված ութերորդցիները: Կարծես ծերունիներ լինեին, բոլորը մի տեսակ ծալված էին: Փայտե հրացանները քարշ էին տալիս: Ոմանք ձյուն էին լիզում: Ալարում էին խոսել: Ամեն վայրկյան կարող էին վար թափվել ու քնել:
Կամ եթե ուզում եք, ասացի ես, թող Արտավազդը մեր խումբ գա:
Իսկ հիմա համաձայն ես, ասաց ուսուցչուհին:
Ես գլուխս կախեցի:
Ինչո՞ւ ես համաձայն:
Համաձայն է,– ասաց Մադաթը:
Քեզ խոսք չի հասնում, դու լռիր, շշնջաց ուսուցչուհին: Ինչո՞ւ ես համաձայն:

Համաձայն եմ, որովհետև վազքից հեշտ բա՞ն:
Նա տխրեց:
Այո, մտամոլոր շշնջաց նա, վազքից հեշտ...
Հեղեղը սլանում է, քամին սարում է, բազեն ճախրում է, խլածաղկի փրփուրը թափառում է, թևերն ուղղած՝ լորենու սերմը քամու հետ թռչո՛ւմ, թռչում է ամեն ինչ գնում է, ամեն ինչ ճախրում է... վազքից հեշտ բան:
Արտավազդ, տխուր ասաց նա, տեղդ վերջինի հետ փոխիր:
Տրեխավոր ոտքերի մեր քայլից մի քիչ ձայն այնուամենայնիվ ելնում էր, իսկ սա տեղն այնքան անաղմուկ փոխեց, որ ես կարծեցի ուսուցչուհու կարգադրությունը չի լսել, ես շուռ եկա նրան ասելու, որ, այո, դա այդպես է, ես նրան ընկերաբար հրավիրում եմ, այնինչ նրա լռիկ գոյությունը հիմա իմ շարքում էր:
Առաջին շարք, գետն ի վեր մինչև Տաք աղբյուր՝ վա՛գ-քո՛վ: Այնտեղ ծաղկած ո՛ւռենի կա, յուրաքանչյուրը բերում է ծաղկած ուռենու մի ճյուղ: Երկրորդ շարք... Մինչ նա կմտածեր մեր առաջադրանքը՝ նրանք ձորակն անցան ու դուրս եկան Կենտ կաղնու զառիվերը: Իմ սրունքները պրկվեցին ու սկսեցին դալալ: Թույլ տար վազեինք նույն ճանապարհով, մի վայրկյանում հասնեինք նրանց, անցնեինք՝ մինչև ծաղկած ուռենի:
Երկրորդ շարք, գետն ի վար մինչև Սողցարաններ ու ետ՝ վա՛գ-քո՛վ: Յուրաքանչյուրը բերում է մի բուռ թեփ:
Ես դեռ մտածում էի գետն ի վեր ծաղկած ուռենուն հասնելու մասին, ես ոչ մի կերպ չէի կարողանում անցնելիք ճանապարհին սղոցարան հիշել:
Հրամանը կրկնիր:
Բայց, կրկնելուց առաջ, ես պետք է հասկանայի հրամանը: Ես ապուշի պես նայեցի նրան: Թե՞փ, հարցրի ես:
Թեփ:
Ես դարձյալ չհասկացա: Բայց ես այնքան էլ մեղավոր չէի. աղջիկներն այդտեղ կանգնած էին, ինչ որ բերեինք՝ ինձ թվում էր տալու էինք աղջիկներին: Նրանց խումբը ուռենու ծաղկած ճյուղ էր բերելու, իսկ մենք՝ թե՞փ:
Թե՞փ, ասացի ես:
Երկրորդ շարք, գետն ի վար, հատ-հատ ասաց նա, մինչև Սողցարաններ ու ետ՝ վազքով: Յուրաքանչյուրդ բերում է մի բուռ թե՛փ:
Այս անգամ ինձ թվաց, թե ես կաղնու կեղև եմ շալակելու, իմ գոտկատեղը հարվելու է, այսինքն՝ քերծվելու, քերծվածքը նորից քերծվելու ու մրմռալու է

քրտինքից:
Լսում եմ: Գետն ի վար վազքով մինչև Սղոցարաններ ու վազքով ետ: Թույլ տվեք կատարել հրամանը:
Սղոցարաններից բերելով մեկական բուռ թեփ:
Այո, ասացի ես:
Կրկնիր:
Դա, ճիշտն ասած, բերանդ զոռով թեփ լցնելու նման էր: Ես տհաճությամբ կրկնեցի.
Սղոցարաններից պետք է բերենք յուրաքանչյուրս մի բուռ թեփ:
Այո: Վազքով:
Մենք պոկվեցինք: Մենք թռանք, բայց իմ անունը տվեցին: Ուսուցչուհին ինձ ետ կանչեց: Իմ վազքը փչացնում էին, ես ետ դարձա վիրավորված ոչ միայն թեփի համար: Ուսուցչուհին ընդառաջ էր գալիս և ուշադիր, մի տեսակ շատ ուշադիր զննում էր ինձ:
Ձեզ չչարչարեք և իրար չչարչարեք, ցածր ասաց նա:
Լսում եմ:
Նա ժպտաց.
Լսիր, է, սա հրաման չի, ցածր ասաց նա. արագ չգնաք, հանգիստ գնացեք, հանգիստ եկեք:
Մադաթենք արագ գնացին:
Նրանք արագ գնացին, ասաց նա, դուք հանգիստ գնացեք:
Լսում եմ:
Կարճ ճանապարհով, ձյունների միջով, դպրոցի այգով, ցանկապատի վրայից ցատկելով՝ ես հասա իմ խմբին:
Տղերք... ես նրանց ասելու էի, թե ով է եղել գեներալ Մադաթովը և ինչ եմ դրել Մադաթի անունը, Օտարը, սակայն, այդ պահին, երբ ես հասա նրանց, ընկավ:
Ոտքի տակ սառույց չկար, ոտքերը մի տեսակ խճճվեցին, ու ընկավ: Ես ուզում էի դժգոհել, բայց նա մեղավորի պես գլուխը կախեց:
Ոչինչ, ասացի ես, ցավե՞ց:
Ընդհակառակը, սրամտեցին:
Ոտքիդ տակ սառույց չկար, ասացի ես:
Չկար, ցածր՝ մրջյունի ձայնով ասաց նա:
Մի խոսիր, ասացի ես, միայն քթով շնչիր:

Քթով եմ շնչում, ցածր՝ մրջյունի ձայնով, այսինքն՝ ինչպես մրջյուններն են խոսում իրար հետ, ասաց նա:
Վազքից հեշտ բան, ասացի ես:
Կվազեմ, շշնջաց նա:
Գիտեմ, որ կվազես, ասացի ես, միայն քթով շնչիր: Եթե քթով չշնչես՝ կոկորդդ կչորանա ու բերանդ կդառնանա:
Բերանս հիմա... դառը չի, շշնջաց նա:
Մենք դուրս եկանք գետափնյա ուղիղ ճանապարհ ու թափով գնացինք: Քամին սկսեց սուլել իմ ականջների մեջ: Օտարի կարմիր վերնաշապիկը երեում ու կորչում, երեում ու կորչում էր իմ ուսի վրայով իմ աչքի անկյունում: Մտնում էր իմ աչքի անկյուն, մի քիչ գալիս էր ինձ հետ ու չքանում էր իմ ուսի ետևում: Ես հասկացա, որ նա ճգնում է, ինքն իրենից ելնում է առաջ անցնել կամ վազել ինձ հետ ուս-ուսի: Ես տեսա նրա լարված դեմքը և սեղմված բաց ատամները: Նա, այո, ուզում էր ինքը իր մարմնից դուրս թռչել, բայց ինձ համար հաճելի էր լինել նրանից թեկուզ երկու քայլ, թեկուզ կես քայլ առաջ:
Այ տղա, այ տղա, այ տղա, կանչեցին: Այ տղա, էդ ի՞նչ եք անում, կանչեց մի ծերունական մաշված ձայն: Սարգիս կծան պապն էր՝ իմ պապի եղբայրը, կովը ջրելու էր բերել: Կովը լղար էր, մեջը ուժ չկար մեզնից խրտնելու: Պոչը բռնած, որպեսզի կովը չընկնի, թե՞ ինքը չընկնի, պապը ծիծաղեց մեր վազքի վրա. էդ ի՞նչ եք անում, այտա, էդպես թփթփալով գնում եք, Գերմանիան հանկարծ կխրտնի ձորը կընկնի: Պապը ձեռնափայտով կտրեց մեր ճանապարհը՝ իբր թե ահա այդպես ինքը մեզ թող չի անի անկարծ խրտնեցնել Գերմանիային, և ինձ բռնեց: Ես բռնվեցի, որովհետև եթե քաշքշվեի՝ պապը թույլ էր, կընկներ: Նա չարչարվում ու չարչարվում էր կծել իմ այտը, բայց թե իմ դեմքին միս չկար և պապի միակ ատամը չէր բռնում:
Կծան պապը ժենը կորցրել է, էլ կարում չի կծի, ծերունու իր պղտոր ձայնով ասաց նա:
Ես դուրս սահեցի նրա ոսկրուտ գրկից և հեռանալուց հետո սրբեցի դեմքս, բայց այդ ամբողջ վազքի ժամանակ ես հիշում էի, որ ինձ սիրել են, որ ինձ սիրում են, որ իր չոր թույլ մարմնից պապն ինձ համար սեր է հանել. իմ դեմքը հիշում էր նրա մորուքի փափկությունը, իմ ականջի մեջ անընդհատ կար նրա աղտոր ձայնը, ես հիշում էի նրան, որը իրեն, իբր երեխաներիս անունից, կծան պապ էր ասում, իր մի կենտ ատամին ժանիք՝ ժեն էր ասում:

Մենավոր խաչքարի մոտ ես հասա իմ խմբին, Օտարի հետ ուս-ուսի մի քիչ գնացի և սկսեցի կամաց-կամաց նրան ետ թողնել: Նա չէր ուզում ետ մնալ ինձնից, նա ուզում էր գալ ինձ հետ ուս-ուսի, միշտ՝ ուս-ուսի, դրա համար նա իր նիհար կուրծքը, ինչպես կարճ վազքի ժամանակ են անում, առաջ էր նետում, կծկվում էր իր մեջ և դարձյալ դուրս էր նետվում ինքն իր միջից, նրա դեմքը ձգվել ու կիսաբաց ատամները սեղմվել էին, բայց նա ետ մնաց, նրա կարմիր վերնաշապիկը իմ աչքի անկյունից իմ ուսի վրայով դանդաղ ետ սահեց:
Հիմա ես խմբի կենտրոնում էի: Թափ-թափ-թափ-թափ–թափ-թափ-թափ-թափ թփա-թփա-թփա-թփա-թփա-թփա... Իմ մարմինը լեցուն էր հրճվանքով, ուրախությունից իմ սիրտը դուրս էր թռչում, ես ուզում էի ծղրտալ: Վազքը իմ մարմնի պահանջն էր, ինչպես որ թևերի պահանջը ճախրն է: Ես կարող էի այդպես արագանալ, արագանալ, արագանալ, պոկվել գետնից ու... Ես ծղրտոցով ետ թողեցի դարձյալ մեկին: Իմ ծղրտոցի վրա առջևից վազողը ետ նայեց: Ես հավասարվեցի նրան, մենք գնացինք ուս-ուսի: «Կներես, բայց քեզ ետ եմ թողնելու», ես արագացա, արագացա, արագացա, ես կարծեցի նրան արդեն ետ եմ թողել, թափ–թափ-թափ-թափ-թափ-թափ–թափ-թափ-թափ–թափ թփա-թփա–թփա, ես ինձ ասացի, թե նրա ոտնաձայնն արդեն լսում եմ իմ ետևից, նա, սակայն, գալիս էր ինձ հետ ուս-ուսի և դեռ մի քիչ էլ առաջ, շեղակիորեն երևում էր նրա մեջքը: Մեջքը, ապա, երևաց դեմ առ դեմ և սկսեց դանդաղ, սանտիմ առ սանտիմ, բայց անընդհատ հեռանալ: Նա իմ խմբի 4 6 8 10 12-ից մեկն էր, նա մի սովորական № էր, նա ինչո՞ւ էր ինձ ետ թողնելու. ես կծկվեցի, մտա ինքս իմ մեջ ու դուրս շպրտվեցի իմ միջից. ես այնպես էի վազում, ինչպես թռչում են կարճ վազքի վերջին քայլերը, ես կծկվում ու բացվում, կծկվում ու բացվում էի, թվում էր, թե հիմա ես կպատռվեմ, բայց միևնույն է՝ նա հեռանում ու հեռանում էր: Եվ ինձ մի պահ թվաց, թե նրա փոխարեն այդպես ես եմ հեռանում, և իմ փոխարեն այդպես լարվում, ճաքում ու չի հասնում, լարվում ու ետ է մնում Արտավազդը, և իմ կրծքի տակ նրա սիրտն է այդպես նեղվում, և իմ տակ նրա ծնկներն են ծալվում:
Ես դանդաղեցի, «խմբի ղեկավարը կարող է նաև վերջից գնալ, որպեսզի ոչ ոքի չթողնի մնալ ճանապարհին», առաջ թողեցի մեկին, երկրորդին,
երրորդին,
չորրորդին,
թույլ տվեցի, որ կարմիր վերնաշապիկը հավասարվի և գա ինձ հետ ուս-ուսի, և

հարցրի.
Ո՞նց ես:
Նա շշնջաց.
Լավ եմ:
Թեփ ենք բերելու, ասացի ես:
Նա շշնջաց.
Թեփ ենք բերելու:
Հո մի տեսա՞կ չես, հարցրի ես:
Նա չպատասխանեց, հետո նա շշնջաց.
Որ հավասար ենք գնում՝ էլ մի տեսակ չեմ լինում:
Ինչքա՞ն կլինենք եկած, կե՞սը, ասացի ես:
Քիչ է մնում, շշնջաց նա:
Քի՞չ: Դու Սղոցարանների տեղը չգիտե՞ս:
Մերըս մի անգամ ուղարկում էր, շշնջաց նա, հերըս չթողեց:
Իսկի կեսն էլ չենք եկել, ասացի ես:
Նա շշնջաց.
Ես ինձ ասում եմ... քիչ է մնացել... հիմա հասնում ենք:
Չէ, շատը դեռ մնում է, Սղոցարանից կաղնու... Ես հասկացա ու հարցրի. Քեզ վա՞տ ես զգում:
Կոկորդը երևի չորանում էր, նա թուքը կուլ տվեց ու շշնջաց.
Որ միասին ենք գնում...
Մադաթի անունը դրել եմ գեներալ Մադաթով, ասացի ես: Մի քիչ արագացնենք: Այդտեղ ինձ թվաց, թե ես ուզում եմ, սակայն ամեն անգամ մոռանում եմ ասել շատ կարևոր մի բան, հուզիչ մի բան: Նա հավասարվեց ինձ, և ես հասկացա, թե ինչ եմ մոռանում:
Մենք միշտ միասին կլինենք, ասացի ես:
Բայց դա անհնար էր: Ես դանդաղում էի՝ նա դանդաղում էր, ես արագանում էի՝ նա ետ էր մնում, և ես դարձյալ դանդաղում էի: Իսկ մերոնք արդեն անցնում էին Փչակ կաղնու ոլորանը: Ես այդպես ինչքան դանդաղեի՝ նա կդանդաղեր, մինչև վերջնական կանգառ: Զրվեժն, այո, քարից թռչում է, արծիվն, այո, ճախրում է, կանաչ արտն, այո, զեփյուռի հետ գնում է, ամեն ինչ շարժվում է, ամեն ինչ հրճվում է, ձյունը ցոլցլում ու խաղում է արևի մեջ... բայց Սարգիս պապը հազիվ կանգնած էր, իսկ նրա կովն ալարեց խրտնել:

Էս ի՞նչ է, շշնջաց նա, լավ չեմ տեսնում:
Ձյուն ու արև:
Ի՜նչ արև է, շշնջաց նա:
Աչքերդ կկոցիր:
Իր գեղեցիկ գլուխը նա ետ էր գցել ու գալիս էր՝ դեմքը արևին պարզած:
Խա՞ղ ես անում, ասացի ես: Հո արևածաղիկ չես:
Նա հավասարվեց ինձ:
Արև է, բայց լավ չենք վազում, ասացի ես:
Նա շշնջաց.
Քիչ է մնացել, չէ՞:
Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, լսեցի ես:
Արևի մեջ ճամփեզրի քարերին նստոտել էին կանայք՝ մեր մայրերը, և կարմրած, արևածաղիկների խմբի պես բոլորը միասին, դեմքները մեզ էին դարձրել: Էս երեխեքին էդ աղջիկն էս ինչո՞ւ է վազեցնում, ասացին նրանք:
Իսկ իրե՞նց ինչու էին վազեցնում: Նրանցից մեկը հակագազը գլխից չէր հանել: Նրանց դեմքերը հակագազի ռետինե նեղվածքում ու քայլքի շոգից էին այդպես կարմրել, թե չէ՝ նրանք մեզնից էլ գունատ էին:
Թեփի, նետեցի ես:
Իմ թեփը ձեզ տամ՝ ետ դարձեք, ասացին նրանք:
Մենք անցանք:
Տո ես դրա թեփի գլուխը հողեմ, էս երեխեքը բա մե՞ղք չեն...
Մեղքը, սակայն, իրենք էին. իրենք էին, ջրով, լվանալու մեր ոտքերը. իրենք էին տրորելու, տաք ջրով, մեր ծնկները, հետո մենք չէինք տաք ջրով տրորելու նրանց ուռած ոտքերը:
Բերանդ փակիր, ասացի ես, քթով շնչիր:
Նա փակեց, բայց քիչ հետո, երբ ես նայեցի, նա շնչում էր լրիվ բաց բերանով:
Քթով շնչիր:
Որ քթով եմ շնչում, օդը... շշնջաց նա:
Օդը ի՞նչ:
Դառն է: նա եկավ դիպավ ինձ ու դարձյալ ետ մնաց:
Էդ շորդ նորից կլվանաք, ասացի Ես:
Լվացել է, տառերը չեն անցնում:
Մադաթի անունը Թուրք... Մադաթի անունը գեներալ Մադաթով եմ դրել, ասացի

ես:
Նրանց տեղը հիմա դժվար է, բարձրանում են, շշնջաց նա: Նրանք հիմա կանգնել են, չեն կարողանում:
Դժվարը մեզ համար վերադարձին է լինելու:
Նրանցը հիմա է դժվար, շշնջաց նա:
Նրանք, ուռենու ծաղկած ճյուղ են բերելու:
Նրանց տեղը հիմա դժվար է, շշնջաց նա, Մադաթի սիրտը հիմա խառնում է:
Քո սիրտը խառնո՞ւմ է:
Մեր տեղը ուղիղ է, մենք իջնում ենք, շշնջաց նա: Նրանք հիմա բարձրանում են: Նրանք հիմա ետ են գալիս, ասացի ես, ուռենու ծաղկած ճյուղեր են բերում, իսկ մենք թեփ ենք տանելու:
Թեփ ենք տանելու:
Թեփ ինչու ենք տանելու, գիտե՞ս:
Չգիտեմ, ասաց նա, ուսուցչուհին ասել է կբերեք:
Որպեսզի ինքը տեսնի, որ հասել ենք Սողցարան: Թեփը դրա համար է:
Որպեսզի մինչև Սողցարաններ անպայման վազենք: Ծաղկած ճյուղն էլ դրա համար է:
Նրանց օդը հիմա դառն է, ասաց նա, Մադաթի սիրտը հիմա խառնում է: Նա եկավ, գլխով դիպավ ինձ, կարծես ուզում էր ինձնից կառչել, բայց դարձյալ ետ մնաց:
Իզուր, ասացի ես, կանանց թեփից դու պիտի վերցնեիր ու ետ դառնայիր: Լսո՞ւմ ես, ետ դարձիր, կանանցից թեփ վերցրու ու գնա, մենք կգանք կհասնենք:
Նա կողքի-կողքի գնաց, ճանապարհից դուրս ընկավ ու եկավ դիպավ ինձ, հորթը կարծես հարու էր տալիս:
Ետ դարձիր, կանանցից թեփ վերցրու, գնա. մենք կգանք կհասնենք, չե՞ս լսում:
Նա կարծես ինքը չէր գալիս, նրա մեջ կարծես գալիս էր մեկ ուրիշը, որ չէր ենթարկվում նրան: Այդ մեկ ուրիշը նրան հրում ու հրում էր ճանապարհից դուրս, իսկ նա այդ մեկ ուրիշին, զոռով, ետ էր հրում դեպի ճանապարհ:
Կանգնիր, ետ դարձիր:
Ես կանգ առա ու շուռ եկա նա կանգնեց ու օրորվեց: Նա դանդաղ բարձրացրեց իր գեղեցիկ գլուխը: Նրա աչքերը պղտոր էին:
Ետ դարձիր, կանանցից թեփ վերցրու...
Նրա հայացքը շաղված էր, նրա միջից կարծես նայում էր հիվանդ հորթը, որը չի

հասկանում, թե ինչ են ուզում իրենից և ինչու չեն թողնում հանգիստ մեռնել:
Խուլ է, շշնջաց նա, խո՛ւլ, խուլ է, կարծես ջրի տակ լինի:
Ես սպասեցի նրա դառնալուն, բայց նա միայն օրորվում ու պղտոր հայացքով նայում էր: Ես նրան ետ դարձրի ու հրեցի դեպի գյուղ: Նա չէր դիմադրում, ինձ թվաց, թե նա համաձայն է, վերադառնում է:
Հիմա դպրո՞ց ենք գնում, շշնջաց նա:
Դու ես գնում, ես վազում եմ Սղոցարաններ, ես քեզ համար թեփ կբերեմ:
Դուք բոլորդ վազում եք, շշնջաց նա:
Զայրույթից ու լացից իմ բուկը նեղացավ:
Ուշանում եմ, ասացի ես, ուշանում եմ, քո պատճառով ուշանում եմ, տղերքը հիմա Սղոցարաններում են:
Դուք բոլորդ վազում եք... Նա կնճռոտվեց: Նա ուժ չուներ հեկեկալու, նա սկսեց լուռ արտասվել: Դուք բոլորդ վազում եք, դու վազում ես...
Լացն սկսեց ինձ խեղդել:
Իմ փոխարեն դո՞ւ ես լաց լինում, պայթեցի ես, քո պատճառով էսքան ուշացա:
Դե արի միասին ետ դառնանք, խուլ, ինչպես որ ձկներն են խոսում ջրերի տակ, շշնջաց նա, ես ու դու միասին ետ դառնանք:
Ես ինչո՞ւ ետ դառնամ, ես կարողանում եմ՝ վազում եմ:
Դուք բոլորդ վազում եք...
Ես քո հերն ու մե՞րն եմ, ինչո՞ւ ես ինձ մոտ լաց լինում, գնա քո հորումոր մոտ լաց եղիր: Ես նրան հրում էի դեպի գյուղ, իսկ նա շշնջում էր.
Միասին ետ դառնանք... երկուսով... ես ու դու...
Ճանապարհը քեզ չի ուտի, ճանապարհին գայլ չկա, գնա:
Ոչ, կտրուկ ասաց նա:
Բա ի՞նչ:
Նա դանդաղ բարձրացրեց իր գեղեցիկ գլուխը և պղտոր խոշոր աչքերը հառեց ինձ:
Ի՞նչ ես ասում, կրկնեցի ես, գիտես, որ գայլ չկա, ինչո՞ւ չես մենակ ետ գնում:
Ադամախնձորը նրա բարակ վզին դանդաղ բարձրացավ, մնաց ու դանդաղ իջավ: Պիտի ասեն... նա հայացքը խոնարհեց:
Ի՞՛նչ պիտի ասեն:
Ասելու են, շշնջաց նա, ասելու են. «Բոլորը տեղ են հասել, ճամփի կեսից միայն Օտարն է ետ եկել»: Բոլորը, բոլորը վազում են, միայն ես չեմ...

Դու ուզում ես... Սակայն իմ կոկորդը խցվեց: Եվ որպեսզի լաց չլինեմ, և որովհետև նա ճիշտ էր, և որովհետև ուշանում էի, ուշանում էի, վայրկյան վայրկյանի ետևից ուշանում էի, և որովհետև ոչինչ, ոչինչ անել չէի կարող, ես հրեցի նրան. Դե գնա՛:
Նա ընկավ, և ես վազեցի:
Էդպես նստած մնա, ուսիս վրայով նետեցի ես, քո մի բուռ թեփը ես կբերեմ: Սակայն նա ելել ու ճոճվելով գալիս էր: Ես կանգ ասա, որպեսզի երբ ինձ հասնի՝ նրան ծեծեմ, բայց նա չհասավ ինձ. նրա ոտքերը խառնվեցին, նա ընկավ: Ապուշ, ծղրտացի ես: Իսկ նա չորեքթաթվել էր ու, այդպես չորեքթաթված, դանդաղ բարձրացնում էր հորթի իր գեղեցիկ գլուխը: Իմ մեջ նա այդպես տպավորվեց: Ես փախա: Ես վախենում էի ետ նայել: Ես վախենում էի նորից տեսնել նրա ճոճուն ընթացքն ու անկումը: Ես հեռանում ու հեռանում էի: Ես ինձ ասում էի, թե ահագին ճանապարհ ենք կտրել՝ իմ վազքը հիմա ծանր է այդ պատճառով, թե մենակ եմ գնում՝ իմ վազքը ծանր է մենակությունից, ես ինձ խաբում էի, թե իմ վազքը բոլորովին էլ ծանր չէ, ես համարյա թե սլանում եմ, քամին համարյա թե աղմկում է իմ ականջների մեջ: Ես զգում էի, որ տհաճ մի բան է եղել, և կարծում էի իմ վազքն ինձ հեռացնում է տհաճ այդ բանից: Ես ինձ ասում էի՝ արագ, արագ, արագ... ուսուցչուհին քեզ հանձնարարել է, և գնում ես թեփի... դու ուրիշ հանձնարարություն չունես, քո առաջադրանքը թեփն է, արագ, արագ, արագ... տհաճ մի բան, այո, եղել է, բայց արդեն եղել է, հեռու, հեռու, հեռու... իսկ ով չի կարողանում՝ թող չվազի:
Ես դանդաղեցի: Ես դանդաղել էի ետ դառնալու մտադրությամբ, բայց այդքան ծանր վազքով անցած իմ ճանապարհը ես ափսոսացի և ինձ ասացի, թե դանդաղել եմ զառիվերի պատճառով: Զառիվերից հետո ճանապարհն իջնում էր, հարկավոր էր միայն չընկնել, և ճանապարհն ինքը իջեցնում էր, բայց իմ վազքը ծանրացավ, ծանրացավ...
... և հիմա կանգ եմ առել ու քեզ պատմում եմ իմ ցավող խղճի պատմությունը: Անցել է քսանհինգ տարի: Դատավորը հանցագործին ասում է. քո ահա այս ու այս չարագործությունների դեմ դու դատարանից ի՞նչ ես խնդրում՝ մա՞հ թե քսանհինգ տարվա բանտարկություն, և չարագործը մտածում ու ասում է. «մահ թե քսանհինգ տարվա՞... բայց մի՞թե դրանք նույն բանը չեն»:
Ես հանցանք, ոչ, չեմ գործել, դատարանում ինձ այդպիսի հարց, ոչ, չեն տվել, ես պարզապես ուզում էի ասել, որ քսանհինգ տարին մահվան հավասար

Ժամանակ է, ամեն ինչ մահացնում, ամեն ինչ մաշում, ամեն ինչ փոխում է. հին խիստ ուսուցչուհին աչքերը կկոցում, նորից է կկոցում ու քեզ ասում է. «Չէ, չճանաչեցի... ակնոցս մոտս չի... ակնոցս կորցրել եմ, ներեցեք, չճանաչեցի», նայում, նայում ու չես հասկանում, թե կանանց մարած այս աչքերի մասին ինչու ես ասել՝ «խաժ աչքերի բույլ», խաժն ուրեմն նրանց աչքերից նայել է միայն մի օր, ապա թռել, գնացել է նայելու հիմա էլ ուրիշ աղջիկների աչքերից: Ամեն ինչ խամրում է, ամեն ինչ փոխվում է... Չի փոխվում, չի մոռացվում, քո մեջ չի խամրում միայն այն, ինչը որ քեզ հետ քո մանկության ժամանակ է եղել, ինչը որ դու ես արել: Եվ եթե պատահել է, որ խմբի հետ վազել ես՝ քո մեջ հավիտյան թպրտալու է, տագնապահար թռչունի գիշերային թևաբախման պես, ձեր ոտքերի դոփդոփումը թափ-թափ-թափ-թափ-թափ թփա-թփա–թփա-թփա... և եթե դու քո ընկերոջը թեփի հետ փոխել ես... այո վազքի քո ընկերոջը փոխել ես թեփի հետ, այսինքն՝ նրան թողել ես չորեքթաթված քո ետևից նայելիս, մի՛ կարծիր, թե ահա այս զառիվերը կանցնես, քո վազքը կհեշտանա, էլ ետ չես նայի ու չես տեսնի նրան չորեքթաթված, խոշոր աչքերի շաղված հայացքը բարձրացնելիս: Ետ չես նայի՝ բայց նա քո դեմ կլինի, արագ կգնաս՝ բայց քո վազքը կլինի ծանր ու անթև: Մազութի մեջ թաթախված թռչունի նման՝ քո խիղճը կնվա, կնվա ու չի կարողանա ճախրել:

Սղոցարաններից սայլով տախտակ էին բերում: Սայլապանը Բադալենց Դառը պապն էր: Ես մի կողմ քաշվեցի սայլին ճանապարհ տալու և մի քիչ ուրախացա: Ավագ պապի,- ասացի ես,– Դարբինյան Արսեն պապի թոռը չկարեցավ գալ, մնաց ճամփին, համոզիր, քեզ հետ ետ տար, էլի:
Դու ո՞ւմ տղեն ես, հարցրեց նա:
Նա այնքան մեծ էր, որ իմ հորն էլ չէր ճանաչի:
Ավետիք պապի թոռն եմ, ասացի ես:
Եզները լղար էին, տախտակը թարմ ու ծանր էր, եզները սայլը դժվար էին քաշում: Անիվը դեմ առավ քարի:
Տո շան տղա, ասաց նա ինձ և ճիպտեց եզանը, քու հընկերոջը ճամփին դու ես թողել, ի՞նձ ես ասում ետ տար:
Ճիպտելու հետ՝ եզը լարվեց ու քարից անցրրեց անիվը: Սայլն անցավ:
Սայլն անցավ, ճանապարհն այլևս բաց էր, բայց ես չէի կարողանում պոկվել իմ կանգնած տեղից: Սրտիս զարկերը խլացան, և հիմա խոր լռություն էր: Կոճղերն

անշարժ էին, ձյունը խաղաղ առկայծում էր, ձյուների մեջ ես անշարժ էի: Ես զգում էի ծանոթ մի բանի ներկայություն, և ինձ թվում էր՝ իմ շալակին կաղնու կեղև կա, և բեռան տակ եփվում եմ ձյան մեջ ու ինքս իմ մեջ: Ճիպտելու ձայն եկավ, որևէ տեղ եզ էր լարվում, ինքն իր շուրջը անիվ էր պտտվում, ոտքեր էին դոփում, իսկ ես կանգնած էի կոճղերի մեջ: Ես մտա ճանապարհ ու հասկացա, որ այդքան ժամանակ կանգնած եմ եղել տախտակի ու թեփի հոտի մեջ, և կարծես դարձյալ կեղև էի շալակելու:

Ես արդեն վազում էի, բայց առաջին պահին չէի հասկանում, թե դեպի ուր եմ վազում: Վազում էի, իհարկե, դեպի Սղոցարան, ես ինձ ասացի, որ վազում եմ դեպի Սղոցարան, բայց ինձ թվում էր դեպի գյուղ եմ վազում, և իմ դեմ ընկած է, պղտոր իր հայացքը բարձրացնում է Արտավազդը: Ես, սակայն, դեպի գյուղ չէի վազում, ես վազում էի Սղոցարաններ՝ թեփի:

Սղոցարաններից վերև, ճանապարհի ոլորանում երևացին տղաների բարալիկ սև կերպարանքները: Ես կարող էի կարճ ճանապարհով, ձյուների միջով, սառած գետն անցնելով Սղոցարաններ հասնել տղաներից մի քիչ շուտ, բայց ես ուզում էի խառնվել նրանց, կորչել նրանց մեջ, լինել նրանցից մեկը: Սղոցարանների մոտ ես հասա նրանց ու գնացի նրանց մեջ:

Օտարը չկարողացա՞վ, ասացին նրանք:

Չկարողացավ, ասացի ես: Ես չհամարձակվեցի ասել. «Դու ես օտար», ես միայն պատասխանեցի՝ «չկարողացավ»:

Հիտլեր կապուտ, ասացին նրանք գերի ռումիններին:

Հիտլեր կապուտ, որպես նրանցից մեկը՝ ասացի ես գերի ռումիններին, որոնք փաթաթում էին իրենց ընկերոջ ոտքը: Նրանք շուռ էին եկել և տխուր ժպտալով նայում էին նիհար այդ տղաներին, որոնք իրենց բարևը տալիս էին իրենց իմացած օտար միակ բառով՝ «կապուտ», կռանում, իրենց ոսկրուտ բռով մեկ թեփ էին առնում և ետ էին վազում՝ ոսկրուտ փոքրիկ բռունցքները պինդ սեղմած: Գերիների հսկիչը, երբ ես աջ բռով վերցնելուց հետո վերցրի նաև ձախ բռով ծաղրեց.

Ծոցդ էլ լցրու, ծոցդ էլ:

Ես շպրտեցի երկու բռիս թեփն էլ, դարձա՝ ետ վազելու, բայց ասացի հսկիչին.

Իսկ դու ի՞նչ գիտես ինչի համար եմ վերցնում:

Չգիտեմ, սաաց նա:

Դե որ չգիտես՝ մի՛ ծիծաղիր:

Ընկերդ ճամփին նստել է ծխելու, քեզ ասել է մի բուռ թեփ էլ ինձ համար կբերես, ասաց նա:
Ո՛չ, ճչացի ես:
Դասատվիդ կասեմ՝ կստուգի:
Ասա: Ես կտրուկ կռացա, վերցրի նախ ձախ ձեռքով՝ Արտավազդի համար մի լիքը բուռ, ապա աջ ձեռքով՝ ինձ համար մի լիքը բուռ թեփ, և բռունցքներս սեղմած վազեցի: Քիչ հետո ես մտածեցի, որ Արտավազդին կտամ հենց աջ բռիս թեփը. բարևելու պես կպարզեմ իմ աջը. ահա, քեզ համար եմ բերել, վերցրու քո թեփը:
Քանի՞ բուռ թեփ ես վերցրել,– խմբի մեջ հարցրի ես:
Մի, քանի՞:
Արտավազդի համար չե՞ս վերցրել, հարցրի ես:
Ո՞նց:
Արտավազդը ետ մնաց, Արտավազդի համար թեփ ե՞ս վերցրել:
Ինչո՞ւ էի վերցնելու:
Արտավազդը ետ մնաց, ասացի ես:
Չեմ վերցրել:
Ես վերցրել եմ, տամ քեզ՝ դու կտաս իրեն:
Ինչո՞ւ, դու վերցրել ես, դու էլ տուր:
Թե ես ինչու չէի կարող իմ աջը այդպես բարևելու պես պարզել Արտավազդին՝ ես չկարողացա նրանց բացատրել, որովհետև, ես ինքս էլ չէի հասկանում, թե ինչու չունեմ նրան այդպես եղբոր պես ձեռք պարզելու իրավունքը:
Նրանք հիմա որտե՞ղ կլինեն, հարցրի ես, արդեն գալի՞ս կլինեն:
Ծաղկած ուռենու մոտ կլինեն:
Նրանք ուռենու ճյուղ են բերելու, ասացի ես:
Մենք էլ թեփ ենք տանում:
Արտավազդի թեփը տամ քեզ՝ դու կտաս, իրեն, ասացի ես:
Դու վերցրել ես՝ դու էլ տար:
Կմեռնե՞ս, ասացի ես:
Էդ ինչո՞ւ դու չես տալիս:
Չէ, ասա, կմեռնե՞ս:
Իսկ դու կմեռնե՞ս:

Մի քիչ դանդաղ գնանք, ասացի ես, նրանք հիմա հագիվ հասնելիս լինեն ուռենուն:
Նրանք հիմա գնացել եկել են:
Իհարկե, Արտավազդը նրանց խմբում չի, ասացի ես:
Մեր խմբում էլ չի:
Եթե Դառը պապը վերցրած լինի... ասացի ես: Մի քիչ դանդաղ գնանք:
Չես կարողանում՝ մի՛ վազիր, ասացին:
Ես մի քիչ ուշ հասկացա, որ դա ասում են ոչ թե առհասարակ թույլերի ու Արտավազդի մասին, այլ ինձ են ասում:
Էդ ո՞վ չի կարողանում, ե՞ս չեմ կարողանում: Իմ ետեվից դե հիմա... Ես լարվեցի, «հասեքը» ես ասելու էի նրանց ետ թողնելուց հետո, ես լարվում ու լարվում էի, սակայն իմ լարումը ես չէի զգում, և ոչ էլ նրանք էին ետ մնում, որպեսզի հասկանայի, թե ես ահա լարվել ու նրանց ետ եմ թողնում, մի ինչ-որ դատարկություն, որպիսին քո մեջ զգում ես, երբ քեզ հարցնում են, օրինակ, լոգարիթմական քանոնի մասին, իմ մեջ ահա այդպիսի պարապություն էր, և չէի կարողանում լարվել:
Իսկ էդ ո՞վ էր, ասացի ես, Արտավազդի պատճառով մի ժամ ետ մնացել, բայց եկավ հասավ:
Դու, նետեցին:
Հա, ես:
Ինչ որ ճիշտ է՝ ճիշտ է, ասացին, Արտավազդի հետ դու ետ մնացիր:
Սղոցարանների մոտ եկա հասա:
Արտավազդը չեկավ, դու եկար:
Ես եկա, հասա:
Երկուսով ետ մնացիք, հետո դու եկար, Արտավազդը չեկավ:
Չեկավ, ես մեղավո՞ր եմ, որ չեկավ:
Ո՞վ է ասում, որ դու մեղավոր ես:
Ես մեղավոր չեմ:
Դու մեղավոր չես:
Ընդհակառակը, ես նրա համար թեփ եմ վերցրել:
Թեփն ի՞նչ ես անելու:
Թեփը տալու եմ իրեն:
Ինչո՞ւ ես տալու:

Նրա համար եմ վերցրել, բա ի՞նչ անեմ:
Ի՞նչն ես նրա համար վերցրել:
Թեփը, ասացի ես, թեփը, թեփը: Թեփը նրա համար եմ վերցրել: Մի քիչ դանդաղ գնանք:
Կծան պապի պատճառով ո՞վ ետ մնաց, ասացի ես, հետո եկավ հասավ:
Նրանք ինձ չպատասխանեցին:
Էնտեղ էլ Կծան պապի պատճառով...
Նրանք ինձ չէին լսում: Նրանք հեռու էին և ավելի էին հեռանում: Համերաշխ, լուռ, կարծես անընդհատ նույն տեղում ու դանդաղ՝ նրանք շարժվում ու շարժվում էին. դա կարծես վազք չէր, վազքի ծաղր էր, առանց թևավորվելու ու առանց ձիավորվելու էլ կարելի էր մի քիչ լարվել, ոտքերին մի քիչ ուժ տալ ու հասնել նրանց... Ես չէի հավատում, որ իմ մեջ պարապություն է և չէի հավատում, որ նրանց արագությունը վազքի ծաղր չէ... Այնինչ, նրանք հեռանում ու հեռանամ էին, և նրանց հետ հեռանում էր կյանքը, խնդությունը, վազքի հրճվանքը, խաժ աչքերի բույլը, մի քիչ հեգնոտ ու մի քիչ ծիծաղկոտ աչքերի բույլը, և ինձ հետ մնում էր վերջինը, թույլը լինելու ամոթը: Ես նախանձում էի նրանց, ես ատում էի նրանց ուսերի համերաշխ վերուվարումը, ես ատում էի անկենդանորեն համառ նրանց ընթացքը: Իմ պարապ գոյությունը նրանց ուժեղ խմբին հիմա կապված էր միայն նախանձով:
Դուք ինձ մենակ եք թողնում, շշնջացի ես: Նրանց թիկունքներն անհաղորդ էին իմ նախանձին, նրանք գնում էին, անընդհատ, չդանդաղելով ու չարագանալով հեռանում էին, և երբ դարձյալ բարձրացրի հայացքս՝ նրանք չկային, ձյունն ու ճանապարհն էր, և ես կանգ առա:
Գնացիք:
Գլուխս կրծքիս, ճոճվելով, ես շշնջացի.
Ոչինչ, գայլն ինձ չի ուտի:
Եվ ես տեսա, որ ոչնչով, այլևս ոչնչով կապված չեմ նրանց՝ ոչ նախանձով, ոչ էլ առաջինը կամ նրանց մեջ լինելու ցանկությամբ, որ այսպես լավ է ես եմ ու ճանապարհն է, ձյուն ու լռություն է, և լուռ ձյուների մեջ ամայի ճանապարհին միայն ես եմ, ուզենամ՝ կպառկեմ, ուզենամ՝ կշեղվեմ ու ձյուների միջով կտանեմ իմ պարապ գոյությունը այնտեղ, ուր հանձնարարված չէ գնալ, և ես ինքս էլ չգիտեմ:
Ես չհասկացա, թե այդ ինչպես էր եղել, որ դարձյալ վազում էի և ոչ թե

պառկած-քնած էի: Ձյուն, ձյուն ու ձյուն էր, և կարծես թե ես նույն ձյան մեջ վազում էի նույն տեղում: Ես ուշքի էի գալիս, բայց դարձյալ չէի հասկանում՝ քնա՞ծ եմ թե տրորում եմ նույն ձյունը: Մթնշաղի պես կարծես թե զատվում, կարծես թե հյուսվում էին իմ մեջ վազքն ու քունը: Ձյունը, ձյունը ու նույն ձյունն էր և ձյան մեջ նույն ձյունն էր և ձյան սպիտակի մեջ չկար ոչ-սպիտակ մի բան, որ ետ մնար, և ես ինձ ասեի, թե նա իմ դեմ էր, թե ահա իմ կողքին է, թե ահա ետ մնաց: Վազքը իհա՛րկե եղել էր. մենք շարվել էինք... մենք բաժանվել էինք երկու խմբի... հեռու բլրի ձյուների մեջ բարձր դասարանցիները «ուռա» էին կանչել... կարմրած կանայք նստոտել ու նայում էին... հետո մենք մեր ձեռքերը խրեցինք տաք թեփի մեջ... վազքը եղել էր վաղուց, երբևէ, եղել վերջացել էր և հիմա լինում էր վազքի երազը: Օտարը եկավ, ոտքերը չռած կանգնեց իմ դեմ, նայեց խոշոր աչքերի պղտոր հայացքով, և այդ էլ մի անգամ կարծես եղել էր, հիմա լինում էր դրա երազը:

Մորդ ասա էդ շապիկդ լվանա, ասացի ես և հասկացա, որ ինքս էլ նրա դեմ եմ կանգնած:

Նա թուքը կուլ տվեց ու հևալով շնչեց:

Քեզ համար թեփ եմ բերել:

Թեփ, շշնջաց նա:

Թեփ եմ բերել, քո թեփը ես վերցրել եմ, ես քեզ չասա՞ի, որ քո թեփը ես կբերեմ:

Իմ թեփը կբերես, շշնջաց նա: Նա վերցրեց իր մի բուռ թեփը իմ բռից, նա ասաց «թեփ», բայց նա կարծես չէր հասկանում, թե ինչ է անում և ինչ է ասում, նա բռունցքները սեղմեց կրծքին և լարվեց դեպի Սողոցարան: Ես գրկեցի նրան, ընկերոջ ու թույլի նրա մարմինն ինձ դուր եկավ, և ետ դարձրի ու վազեցի նրա կողքից, բայց մի ոռպե ես չէի հասկանում, թե ով է ում ետ դարձրել նա՞ ինձ՝ դեպի Սողոցարան, թե՞ ես իրեն՝ դեպի գյուղ:

Ինձ հետ դու ինչո՞ւ ես գալիս, շշնջաց նա: Նա ուրեմն կարծում էր մենք վազում ենք դեպի Սողոցարաններ: Դու ինձ հետ մի՛ արի, շշնջաց նա:

Ես նրան բան չասացի, որովհետև ինձ նույնպես թվաց, թե վազում ենք դեպի Սողոցարաններ:

Ինչո՞ւ ես ինձ հետ գալիս, շշնջաց նա, ինձ հետ մի՛ արի:

Քիչ խոսիր, ասացի ես, քթով շնչիր:

Մի՛ արի:

Այս անգամ ինձ թվաց, թե նա չի ուզում վազել ինձ՝ վատիս հետ: «Ես կգնամ ու

կգամ, շշնջաց նա, կգնամ ու կգամ», այնինչ, նա կարծում էր, ես այնքան լավն եմ, որ զուտ իր համար վազում եմ դարձյալ դեպի Սղոցարաններ:
Դու կգնաս ու կգաս, ասացի ես:
Կգնամ ու կգամ, շշնջաց նա:
Բերանդ փակիր:
Նա ընկավ: Չորեքթաթվեց ու նորից ընկավ:
Կգնաս ու կգաս, ասացի ես, էդ է քո գնալուգալը: Ես չէի կարողանում նրան բարձրացնել, և իմ չարչարանքն ինձ դուր էր գալիս: Ինձ դուր էր գալիս, որ ես ահա նրան գետնից բարձրացնում եմ, որ նրա բռան մեջ իմ թեփն է, որ իմ մարմինը շփվում է նրա նիհար կողերին:
Լուռ է, շշնջաց նա, խո՛ւլ, խուլ է:
Ինչ Սղոցարան, ինչ թեփ, ասացի ես, էդ ով է ստուգելու՝ մենք Սղոցարան հասե՞լ ենք թե ոչ:
Դու մի անգամ գնացել ես, դու մի՛ արի, շշնջաց նա, ես կգնամ ու կգամ:
Բերանս դառնացել է, մի քիչ դանդաղ գնա, ասացի ես:
Մի՛ արի, շշնջաց նա, ես գնամ ու գամ:
Իմ թեփը տղաներն են բերել, ասացի ես:
Քո թեփը տղաներն են բերել, շշնջաց նա: Քո բերանը դառնացել է, շշնջաց նա:
Ո՛ոչ, բղավեց նա, դու ինձ խաբել ես, դու ինձ գյուղ ես տանում:
Ես փակեցի նրա ճանապարհը:
Իմ թեփը տղաներն են բերել: Միևնույն է, դու Սղոցարան չես գնա, չեմ թողնի:
Ո՛ոչ:
Ես գրկեցի նրան, և երկուսս էլ ընկանք: Եվ այդպես պառկելը նույնքան դուրեկան էր, ինչքան վազքի հրճվանքը ճանապարհի սկզբում: Մենք դժվար ելանք, որովհետև ես նրան բաց չէի թողնում, իսկ նա չէր կարողանում բարձրացնել ինձ:
Դու ինձ խաբում ես, լաց եղավ նա, դու Սղոցարան հասել ես:
Թեփը ես տղաներից եմ վերցրել:
Դուք բոլորդ, բոլորդ Սղոցարան եք հասել, միայն ես չեմ հասել, լաց եղավ նա:
Լաց եղավ, այսինքն՝ թե իր մեջ այլևս ուժ չէր գտնում շուռ գալու դեպի Սղոցարաններ, այսինքն՝ թե համաձայնել էր այն մտքին, որ ահա այդպես, իմ տված թեփը բռունցքի մեջ և բռունցքը կրծքին սեղմած՝ վազելու է դեպի գյուղ: Եվ գալիս-գալիս ու լացից ծռմռվում էր.
Բայց չես ասի... չես ասի, չէ՞, որ իմ թեփը դու ես բերել:

Դարձյալ.
Դու չես ասի... չես ասի, չէ՞, որ ես Սղոցարան չեմ հասել:
Դու Սղոցարան հասել ես: Բայց նա գալիս-գալիս ու դարձյալ խեղդվում էր.
Բա որ ասեն Սղոցարաններում ի՞նչ կար:
Թե՛փ, թեփ կար, ասում էի ես, թեփ կար:
Արտասուքներն ընկնում էին նրա բռունցքներին, իսկ նա չէր ուզում արտասվել, և դեմքը ծռմռվում էր.
Բայց դու հասել ես Սղոցարան:
Դու էլ ես հասել, ասում էի ես, և նա խեղդվում ու փղձկում էր:
Բայց դու չես ասի, չէ՞, որ ես չեմ հասել:
Քո թեփը քո բռի մեջ է, դու հասել ես, ասում էի ես բայց միևնույն է, ստի համար նրա մարմնի մեջ տեղ չկար, լաց լինելով նա հարցնում էր.
Բա որ ասի թեփը որտեղի՞ց է:
Սղոցարաններից, ասում էի ես:
Բայց ես Սղոցարաններ չեմ՝ հասել, խեղդվում էր նա, Սղոցարաններ չեմ հասել, բայց ձեռքիս թեփ կա, որտեղի՞ց է:
Գյուղը երևաց: Ես ուղղվեցի և ասացի.
Դու ինձանից լավ ես վազում:
Բլուրների վրայից գյուղը նայում էր: Տանիքները ճակատներին քաշած՝ գյուղի տները նայում էին: Նայում ու տեսնում էր գյուղը, որ իր որդիներից երկուսը՝ Արսեն պապի թոռը և Ավետիք պապի թոռը, վերադառնում են ընկերաբար միասին, նրանցից մեկն, իհարկե, մի քիչ ուժեղ կլինի, մյուսը՝ մի քիչ թույլ, բայց ետուառաջ չեն ընկնում, գալիս են ընկերաբար ուս-ուսի: Գյուղի տների միջից դպրոցը մեզ նայում էր լուսամուտների մայրամուտային կայծկլտոցով: Դպրոցի դռնից մեր վերադարձը հավանաբար դիտում էր աղջիկների կանաչ-կարմիր-նարնջի խումբը... նարնջի հագած աղջիկների խումբը՝ ուռենու ծաղկած ճյուղերը ձեռքներին նայում ու տեսնում էր, թե ինչքան խեղճ, ինչքան թույլ սիրտ պայթելու չափ դանդաղ է ամենավերջինների մեր ընթացքը:
Դպրոցի դռնից հիմա նայում են,– շշնջաց նա:
Դու ինձանից լավ ես վազում, ասացի ես,– արագացրու:
Նա լարվեց, նրա դեմքը ծռմռվեց, բայց նա ետ էր մնում: Լարման միջից նա դարձյալ լարվեց, մի պահ հավասարվեց ինձ, կարմիր թիկունքը շեղակիորեն երևացնելու չափ անցավ ինձնից, բայց նույնիսկ այդ ակնթարթին երևում էր, որ

նա ինձ հավասարվել է միայն անցողիկ մի պահով: Եվ նրա դեմքին բռնկվեց ու հանգավ այն խեղճ ժպիտը, որ մարդկանց դեմքին բացվում է պարտության հետ հաշտվելու պահին: Նա շշնջաց.
Դու գնա:
Մենավոր խաչքարը, ասացի ես:
Բա՞ն ես ասում, շշնջաց նա:– Դու գնա:
Մենավոր խաչքարը:
Ուրիշ ի՞նչ էի ասելու: Հո չէր կարելի հենց այնպես, նրան ոչինչ չասելով, նրան չզգալով, իբր թե կողքիդ ոչ ոք էլ չի քաշում վազքի իր չարչարանքը, պոկվել նրանից և տանել քո հաղթական գոյությունը աղջիկների հայացքների միջով դպրոցի բակ:
Դպրոցի ներքևից, ճանապարհի այգեզրյա ոլորանից ես ետ նայեցի նա գալիս էր ցավալիորեն դանդաղ, որտեղ թողել էի՝ այնտեղ էլ կար. ձյունների մեջ իրենց ձորում ինքն ու խաչքարն էին և գրեթե չէին շարժվում:
Ես ուղղվեցի ու դուրս եկա դպրոցի բակ, և դպրոցի բակը դատարկ էր: Ձայն չկար, միայն իմ ականջների խշշոցն էր: Դպրոցի բակը ամայի էր:
Դասասենյակում մարդ չկար, գրատախտակը սև ու սրբված էր: Ուսուցչանոցում մարդ չկար, ժամացույցի ծանրոցը ճոճվում էր լռության մեջ, ուռենու ծաղկած ճյուղերը գրասեղանին մարմրում էին անշշուկ: Բակը ամայի էր, ուսուցչանոցի շեմքին մի քիչ թեփ կար:
Ոչ, շշնջացի ես, ոչ, ոչ...
Ես բացեցի իմ բուռը, և կոկորդս նեղանում էր, բռունցքիս մեջ թեփը գունդ էր դարձել, թուքս կուլ տվի, և. իմ ադամախնձորը ելավ, ինձ խեղդեց ու դանդաղ իջավ, և այդ էլ մի անգամ կարծես եղել էր և հիմա լինում էր դրա երազը, ես զգեցի թեփի գունդը: Գունդը փլվեց ու շաղ եկավ, և շեմքի թեփը դարձյալ մի քիչ էր, եթե դու չլինեիր բերած՝ չէիր նկատի:
Ես կռացա, երկու ձեռքով հավաքեցի մեր բոլորիս բերած թեփը, և ամբողջ թեփը եղավ մի բուռ աղբ, և վազեցի ուսուցչուհու տուն: Նա կովերի համար գոմը խոտ էր տանում: Ուռենու ծաղկած ճյուղը ձեռքին՝ Մադաթը կանգնած էր կովերի և գոմի արանքում, կովերին չէր թողնում գոմ մտնել, մինչև հորաքույրը խոտ խցկեր մսուրները: Նա հոնքը կեռեց, ինձ նայեց կողքանց և ատամների արանքից ծլթոցով թքեց, այսինքն թե՝ այդպես կխցկի իմ պարտությունը իմ բերանը: Խոտը թևի տակ՝ ուսուցչուհին տեսավ ինձ, շտկեց թևատակի խոտը, հիմա լռություն էր,

և նայեց ինձ: Միայն ինձ: Ես բացեցի բուռս և լսեցի թեփի ընկնելու ձայնը: Նրա հայացքում սիրո թե փաղաքշանքի պես մի բան զգացվեց, և շրթունքների աննշան դողով, շշուկով նա հարցրեց. «Իսկ Արտավազդն ո՞ւր է», և ես զգացի, որ նա ուզում է ինձանից լսել՝ «եկել է, դպրոցում է», բայց նա չէր եկել, դպրոցում չէր, ձորի իր հատակներում, մենակ, շեղվելով ու ընկրկելով կովում էր իր վազքի դեմ. «գալիս է», ասացի ես, և նրա հայացքը դարձավ այնպիսին, կարծես իմ մեջ նա տեսնում էր իր եղբոր սպանողին:
Այո: Նա շուռ եկավ ու ներս տարավ իրենց կովերի խոտը: